2019

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 2

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ 4

ՀԱՅՏԵՐ 4

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ 10

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 12

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ 17

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ 18

ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄՆԵՐ 18

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ 19

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 19

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 19

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ 20

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 22

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 24

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Երեմ Չախոյան

Քրիստինե Համբարյան

Սուսաննա Դավթյան

Արփինե Եգանյան

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

Հեռ. 011 597 534 հայտերի ընդունման բաժին

Հեռ. 011 597535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Internet: www.aipa.am

E-mail: armpat@aipa.am

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության գործակալությունը 2019 թվականին իրականացրել է մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթները:

Գործակալությունը 2018 թվականին առավել բարձրացրել է մատուցվող ծառայությունների որակը և անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը ավելի հասանելի է դարձրել: Ավելացել են էլեկտրոնային տարբերակով ներկայացվող արդյունաբերական սեփականության օբյեկտներին վերաբերող հայտերի քանակը, կատարվել են տվյալների թվայնացում, հրապարակվել են պաշտոնական տեղեկություններ, թարմացվել է Նիցայի դասակարգիչը: Իրականացվել է մտավոր սեփականության օբյեկտներին վերաբերող հայտերի և դրանց ամբողջ գործավարությանը վերաբերող փաստաթղթերի թվայնացում:

2019 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն են ներկայացվել «Արդյունաբերական դիզայնի մասին», «Արտոնագրերի մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» նոր օրենքների նախագծերը:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Մտավոր սեփականության գործակալությունը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ մտավոր սեփականության բնագավառում:

Գործակալությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ընդունումն ու փորձաքննության անցկացումը, պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց օգտագործման իրավունքի ընձեռման՝ լիցենզային պայմանագրերի, և բաց լիցենզիաների գրանցումը:

Իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների մասին պաշտոնական տեղեկությունները Գործակալությունը նախապատրաստում և հրապարակում է իր կայքէջում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան Գործակալությունը համագործակցում է նմանատիպ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Գործակալության կազմում գործում են հետևյալ բաժինները.

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Գյուտերի և օգտակար մոդելների բաժին (9 փորձագետ)
Բաժնի պետ՝ Ավետիս Պերյան



Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժին (12 փորձագետ)
Բաժնի պետ՝ Լուսինե Մանուկյան

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բաժին (3 մասնագետ)
Բաժնի պետ՝ Արմենուհի Շահինյան

Տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին (5 մասնագետ)
Բաժնի պետ՝ Արփինե Եգանյան

Հայտերի ընդունման բաժին
(3 մասնագետ)
Բաժնի պետ՝ Սուսաննա Դավթյան

Պետական գրանցամատյանների բաժին (6 մասնագետ)
Բաժնի պետ՝ Արա Արգարյան

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ՀԱՅՏԵՐ

2019 թվականին Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 116 գյուտի և 37 օգտակար մոդելի հայտ, որոնցից 149-ը՝ ազգային հայտատուներից, 4-ը՝ օտարերկրյա հայտատուներից (Իտալիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից և Շվեյցարիայից):

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



	2015	2016	2017	2018	2019
Ազգային հայտատուներ	167	124	146	135	149
Օտարերկրյա հայտատուներ	3	2	4	6	4
Ընդամենը	170	126	150	141	153

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4772:

2019 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 100 գյուտի և 32 օգտակար մոդելի արտոնագրեր:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆև) ներկայացվող միջազգային հայտերով և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար։

1994-2019 թվականների ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 93 միջազգային հայտ։

2019 թվականին գործակալությունը ստացել է 5 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն։

Այսպիսով, 1997-2019 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 51 եվրասիական հայտ։

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 156 հայտով, ընդ որում՝ 96 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 34 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 20 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 3 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ

մերժելու մասին, 3 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:

Ինչպես նաև կայացվել են 2 գյուտի արտոնագրերով՝ արտոնագրաունակության մասին եզրակացության հրապարակման մասին որոշումներ:

ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԴԻԱԳՐԱՄԻ ՏԵՍՔՈՎ



2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը ընդհանուր թվի մեջ
1.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	22	14,38%
2-3.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	14	9,15%
2-3.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	14	9,15%
4.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	13	8,50%
5.	Չափում և օպտիկա (G01-G03)	10	6,53%
6.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	9	5,88%
7-8.	Օրգանական քիմիա (C07, A01N)	8	5,23%
7-8.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	8	5,23%
9.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	7	4,58%
10-11.	Մետաղագործություն և էլեկտրոլիզ (C21-C23, C25)	6	3,92%
10-11.	Կենսաքիմիա, շաքար, կաշիներ (C12-C14)	6	3,92%
12-24.	**Այլ բնագավառներ**	36	23,53%
	Ընդամենը	**153**	**100**

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	2017	2018	2019	Ընդհանուր թիվը (2017- 2019)	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	8	20	22	50	11.26%
2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	17	16	13	46	10.36%
3-4.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	7	11	14	32	7.21%
3-4.	Չափում և օպտիկա (G01-G03)	11	11	10	32	7.21%
5.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	13	8	9	30	6.76%
6.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	5	9	14	28	6.31%
7-8.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	11	6	7	24	5.41%
7-8.	Շինարարություն (E01-E06)	16	4	4	24	5.41%
9-10.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	7	4	8	19	4.28%

9-10.	Օրգանական քիմիա (C07, A01N)	5	6	8	19	4.28%
11-12.	Տրանսպորտ (B60-B68)	7	6	5	18	4.05%
11-12.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	11	4	3	18	4.05%
13.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	9	2	3	14	3.15%
14-15.	Մետաղագործություն և էլեկտրոլիզ (C21-C23, C25)	1	5	6	12	2.70%
14-15.	Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11)	5	5	2	12	2.70%
16.	Լուսավորում, ջեռուցում, սառնարանային տեխնիկա (F21-F28)	4	2	2	8	1.80%
17.	Ֆիզիկական և քիմիական գործընթացներ (B01-B09)	1	5	1	7	1.58%
18.	Այլ բնագավառներ	12	17	22	51	11.48%
	Ընդամենը	150	141	153	444	100%

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2019 թվականին տրվել է գյուտի 100 արտոնագիր և օգտակար մոդելի 32 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է գյուտի 3 արտոնագիր (Իտալիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Շվեյցարիա):

ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



	2015	2016	2017	2018	2019
Գյուտի արտոնագիր	81	93	74	100	100
Օգտակար մոդելի արտոնագիր	50	44	27	35	32
Ընդամենը	131	137	101	135	132

2019 թվականին տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 3352 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 219–ը, իսկ օգտակար մոդելի 572 արտոնագրերից գործում են 126-ը:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ԳՐԱՖԻԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ (2015-2019)



	2015	2016	2017	2018	2019
Գյուտի արտոնագիր	248	201	209	209	219
Օգտակար մոդելի արտոնագիր	116	125	126	128	126
Ընդամենը	364	326	335	337	345

2019 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 5150 Եվրասիական արտոնագրեր։

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

2019 թվականին զգալիորեն աճել է Մտավոր սեփականության գործակալություն ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը:

Ազգային ընթացակարգով ստացվել է 2722 հայտ, ինչը 26.5%-ով ավելի է նախորդ տարվա համեմատ (2018 թվականին՝ 2147 հայտ): Հայտերից 2157-ը ստացվել է ազգային հայտատուներից:

Ապրանքային նշանների թվով 2663 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, գրանցվել են 1789 ապրանքային նշաններ, որոնցից 1353-ը՝ ազգային հայտատուների անունով: Գրանցված ապրանքային նշանների քանակն աճել է ընդամենը 23%-ով նախորդ տարվա համեմատ (2018 թվականին՝ 1453 հայտ), 53%-ով աճել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումների քանակը (179 մերժում՝ նախորդ տարվա 117-ի դիմաց), հետ կանչված են համարվել 82 հայտ:

2019 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1789 ապրանքային նշանների վկայագրեր:

Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3198 ծանուցում, ինչը 5% ավելի է նախորդ տարվա համեմատ (2018 թվականին՝ 3043 ծանուցում):



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

Միջազգային ծանուցումներով կայացվել է 2099 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին կայացվել է 954, իսկ վերջնական մերժման մասին՝ 476 որոշում:

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	2157		2157
AG	Անտիգուա և Բարբուդա		3	3
AE	Արաբական Միացյալ Ամիր.	24	9	33
AT	Ավստրիա		19	19
AU	Ավստրալիա		7	7
BA	Բոսնիան և Հերցոգովինա	2		2
BB	Բարբադոս	1		1
BE	Բելգիա	2	23	25
BG	Բուլղարիա		19	19
BR	Բրազիլիա	3		3
BY	Բելառուս	1	62	63
BZ	Բելիզ		2	2
CA	Կանադա	2	1	3
CH	Շվեյցարական Համադաշնություն		229	229
CN	Չինաստան	46	476	522
CU	Կուբա		2	2
CY	Կիպրոս	4	47	51
CZ	Չեխիայի Հանրապետություն		26	26

DE	Գերմանիա	13	257	270
DK	Դանիա	3	8	11
EE	Էստոնիա		4	4
EG	Եգիպտոս	3	3	6
EC	Էկվադոր	1		1
ES	Իսպանիա	8	43	51
FI	Ֆինլանդիա	11	8	19
FR	Ֆրանսիա	20	107	127
GB	Միացյալ Թագավորություն	26	83	109
GE	Վրաստան	13	6	19
GR	Հունաստան	1	6	7
HR	Խորվատիա		2	2
HU	Հունգարիա	20	119	139
IE	Իռլանդիա	6	15	21
IN	Հնդկաստան	1	7	8
IR	Իրան	12	10	22
IS	Իսլանդիա		3	3
IQ	Իրաք		2	2
IT	Իտալիա	4	156	160
JE	Ջերսի	3		3
JO	Հորդանան	2		2
JP	Ճապոնիա	26	63	89
KG	Ղրղզստան		1	1
KR	Կորեայի Հանրապետություն	9	54	63
KY	Կայմանյան կղզիներ	2		2
KZ	Ղազախստան	2	95	97
LB	Լիբանան	7		7
LK	Շրի Լանկա	3	1	4
LI	Լիխտենշտայն		13	13
LV	Լատվիա		60	60
LT	Լիտվա		14	14
LU	Լյուքսեմբուրգ	3	22	25

MA	Մարոկկո		1	1
MC	Մոնակո		3	3
MD	Մոլդովայի Հանրապետություն		7	7
MH	Մարշալյան կղզիներ		3	3
MK	Մակեդոնիա	1	2	3
MT	Մալթա	1		1
MX	Մեքսիկա		1	1
MY	Մալայզիա	1		1
NL	Նիդերլանդներ	2	36	38
NO	Նորվեգիա		3	3
NZ	Նոր Զելանդիա		1	1
OM	Օմանի Սուլթանություն	1		1
PL	Լեհաստան	5	53	58
RO	Ռումինիա		9	9
PR	Պուերտո Ռիկո	3		3
PT	Պորտուգալիա		5	5
QA	Քաթար	2		2
RU	Ռուսաստանի Դաշնություն	59	509	568
SA	Սաուդյան Արաբիա		1	1
SC	Սեյշելյան	1		1
SE	Շվեդիա	6	22	28
SG	Սինգապուր	22	9	31
TH	Թայլանդ		2	2
TM	Թուրքմենստան		2	2
TR	Թուրքիա	1	69	70
TW	Տայվան	2		2
SI	Սլովենիա		11	11
SK	Սլովակիա		4	4
SM	Սան Մատեո		2	2

SY	Սիրիայի Արաբական Հանրապետություն		1	1
VN	Վիետնամ		9	9
VG	Վիրջինյան կղզիներ	6	16	22
UA	Ուկրաինա	9	75	84
UZ	Ուզբեկստան	1	3	4
USA	ԱՄՆ	158	252	410
Ընդամենը		**2722**	**3198**	**5920**

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 33 հայտ:

2019 թվականին կրկին առաջատար դիրքում են 35-րդ դասի (գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 522 հայտ (2018 թվականին՝ 382 հայտ), երկրորդ տեղում են 33-րդ դասի (ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի)) ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 463 հայտ (2018 թվականին՝ 355 հայտ) և երրորդ տեղում են 43-րդ դասի (սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում) ծառայությունների համար գրանցման ներկայացվածները, որոնց թիվը կազմում է 362 հայտ (նախորդ տարի երրորդ տեղում էին 5-րդ դասի համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները):

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում 130%-ով աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը (439 հայտ) նախորդ տարվա համեմատ (2018 թվականին՝ 191 հայտ):



ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019 թվականի ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ 171 գրավոր առարկություններ և դիտողություններ, ինչը 85% -ով ավելին է նախորդ տարվա համեմատ (2018 թվականին՝ 93 առարկություն):



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2019 թվականին նվազել է Գործակալություն ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը: Ազգային ընթացակարգով ստացվել է 42 հայտ (2018 թվականին՝ 57 հայտ): Հայտերից 37-ը ստացվել են ազգային հայտատուներից, ինչը 9-ով պակաս է նախորդ տարվա համեմատ: Գրանցվել է 29 արդյունաբերական նմուշ, որոնց տրվել են արդյունաբերական նմուշի գրանցման վկայագրեր: Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 121 ծանուցում, ինչը 10% -ով ավել է նախորդ տարվա համեմատ (2018 թվականին՝ 111 ծանուցում):

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական նմուշի 7 հայտ (2018 թվականին՝ 7 հայտ):

2019 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 29 արդյունաբերական նմուշների վկայագրեր:

ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է 757 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգման և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող 25 դիմում իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգման մասին:

Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 700 փոփոխություն և այլ գործողություններ:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 117 ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու, 2 ապրանքային նշանների ֆրանչայզինգի, 19 ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու, 2 ապրանքային նշանների ենթալիցենզիայի, 6 ապրանքային նշանների լիցենզիաների փոփոխությունը գրանցելու, 1 ապրանքային նշանի ենթալիցենզիաների փոփոխությունը գրանցելու, 3 ապրանքային նշանների լիցենզիաները չեղյալ հայտարարելու մասին, ինչպես նաև 1 արտոնագրի բացառիկ լիցենզիա տալու, 4 արտոնագրի զիջման, 1 արտոնագրի լիցենզիայի չեղյալ հայտարարելու մասին դիմումներ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2019 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ ներկայացվել է 1 հանրահայտ ապրանքային նշանի վերաբերյալ դիմում, 17 ապրանքային նշանների և 2 գյուտի վերաբերյալ դիմում-բողոքներ: Ներկայացված բողոքներից 9-ը բողոքարկման խորհուրդը բավարարել է, իսկ 8-ի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում, 2 գյուտի բողոքի վերաբերյալ կայացվել է գործավարությունը շարունակելու վերաբերյալ որոշում:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2019թ. ընթացքում Գործակալությունը 50 դատական գործով մասնակցել է 120 դատական նիստի:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2019 թվականին մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել 2012 թվականի հունիսի 24-ին ընդունված «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը վավերացնելու մասին» և 2013 թվականի հունիսի 27-ին ընդունված «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը:

Սահմանադրական դատարանը քննության է ընդունել վերը նշված միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը որոշելու վերաբերյալ գործերը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2019թ. նախաձեռնվել է սեպտեմբերի 9-ին Նուր-Սուլթանում, (Ղազախստանի Հանրապետություն) ստորագրված «1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից «Արդյունաբերական նմուշների պահպանության մասին» արձանագրությանը (այսուհետ՝ Արձանագրություն), միանալու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2019 թվականին հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 23 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են 100 գյուտի, 32 օգտակար մոդելի, 29 արդյունաբերական նմուշի, 1789 ապրանքային նշանի մասին պաշտոնական տեղեկություններ, ընդգրկվել են նաև ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին տեղեկություններ:

2019 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 23 համար: Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, Գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով: Իրականացվել է 2018 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

2019 թվականին էլեկտրոնային եղանակով Գործակալություն է ներկայացվել 439 ապրանքային նշանի (2018 թվականին՝ 191), 7 գյուտի (2018 թվականին՝ 2) և 7 արդյունաբերական նմուշի հայտ (2018 թվականին՝ 7):

Ոչ թղթային տեխնոլոգիաներին անցնելու նպատակով ձեռնարկվել են մի շարք քայլեր: Թվայնացվել են մոտ 1798 ապրանքային նշանի, 100 գյուտի, 32

օգտակար մոդելի, 29 արդյունաբերական նմուշի փաստաթղթերը: Թվայնացման աշխատանքները շարունակվում են նաև 2020 թվականին:

2019 թվականի ընթացքում ներդրվել են արդյունաբերական նմուշների միջազգային գրանցումների տվյալների բազան և էլեկտրոնային եղանակով ապրանքային նշանների գրանցման ժամկետի երկարաձգման ենթահամակարգը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գործակալությունը շարունակել և ավելի ամրապնդել է համագործակցությունը ՄՍՀԿ, ԵԱԱԳ միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների հետ: Համագործակցության հիմնական կարևոր ուղղությունը 2019 թվականին Գործակալության մասնագետների մասնակցությունն էր տարբեր միջոցառումներին՝ համաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին, գործնական հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են մտավոր սեփականության բնագավառի զարգացման ուղիները:

2019 թվականի մայիսի 5-11-ը Չենդու քաղաքում (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) Չինաստանի մտավոր սեփականության ազգային գերատեսչության կողմից կազմակերպված Մտավոր սեփականության վերաբերյալ ուսուցողական սեմինարին մասնակցեց Գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի աշխատակիցը:

2019 թվականի մայիսի 21-22-ը Երևան քաղաքում Մտավոր սեփականության գործակալության (ՄՍԳ) և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) կողմից համատեղ կազմակերպվեց տարածաշրջանային աշխատաժողով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարում» խորագրով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատաժողովի նպատակն էր քննարկել հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների ոլորտի խնդիրները՝ անդրադառնալով ոլորտում առկա մարտահրավերներին, միջազգային զարգացումներին, ինչպես նաև կոլեկտիվ կառավարման կազմակերպություններին՝ շեշտելով դրանց դերն ու նշանակությունը հեղինակների գույքային իրավունքների կառավարման հարցում:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի Հանրապետության կառավարության, շահագրգիռ նախարարությունների, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Բուլղարիայի համապատասխան գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև միջազգային փորձագետներ և այլ շահառուներ:

2019 թվականի մայիսի 2-24-ը Դեյեջոն քաղաքում (Կորեայի Հանրապետություն) կազմակերպված արդյունաբերական նմուշների դասընթացին մասնակցեց Գործակալության ներկայացուցիչը:

2019 թվականի մայիսի 20-24-ը Գործակալության գյուտերի և օգտակար մոդելների բաժնի փորձագետները մասնակցեցին Եվրասիական արտոնագրային գերատեսչության կողմից ազգային գերատեսչությունների մասնագետների համար կազմակերպված «Գյուտերի հայտերի արտոնագրման եվրասիական համակարգը (ֆիզիկայի, մեխանիկայի և էլեկտրատեխնիկայի բնագավառների հայտերի փորձաքննության առանձնահատկությունները)» թեմայով որակավորման բարձրացման դասընթացին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունիսի 3-6-ը Գործակալության ներկայացուցիչը մասնակցեց Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) տեղի ունեցած «Մտավոր սեփականության իրավունքների ներկայիս մարտահրավերները և ռազմավարական օգտագործումը» խորագրով տարածաշրջանային սեմինարին:

2019 թվականի օգոստոսի 7-10-ը Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) տեղի ունեցավ Եվրասիական արտոնագրային կազմակերպության վարչական խորհրդի բյուջետային աշխատանքային խմբի 24-րդ նիստը, որին մասնակցեց աշխատանքային խմբում ընդգրկված Գործակալության ներկայացուցիչը:

2019 թվականի սեպտեմբերի 5-7-ը Բիշկեկում (Ղրղզստանի Հանրապետություն) անցկացվեց Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության հարցերով ԱՊՀ Միջպետական խորհրդի 9-րդ նիստը: Նիստին զեկույցով հանդես եկավ Պետական գրանցամատյանների բաժնի պետը:

2019 թվականի սեպտեմբերի 5-6-ը Ղրղզստանի Հանրապետությունում անցկացվեց տարածաշրջանային սեմինար «Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիր (PCT)» թեմայով, որը կազմակերպվել էր Եվրասիական արտոնագրային գերատեսչության կողմից՝ Ղրղզստանի արտոնագրային գերատեսչության և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հետ համատեղ: Սեմինարին հրավիրված էին նաև Գործակալության Գյուտերի և օգտակար մոդելների բաժնի փորձագետները:

2019 թվականի սեպտեմբերի 9-ին Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Նուր-Սուլթանում տեղի ունեցած դիվանագիտական

խորհրդաժողովում անդամ պետությունների պատվիրակությունների ներկայացուցիչների կողմից ստորագրվեց 1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից «Արդյունաբերական նմուշների պաշտպանության մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն): Արձանագրությունը ստորագրեցին Հայաստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզական Հանրապետությունը, Ադրբեջանի հանրապետությունը: Արձանագրության ստորագրությանը հաջորդիվ՝ 2019 թվականի սեպտեմբերի 10-11-ը, տեղի ունեցավ Եվրասիական արտոնագրային կազմակերպության վարչական խորհրդի երեսունհինգերորդ (քսանվեցերորդ հերթական) նիստը:

2019 թվականի սեպտեմբերի 16-24-ը Գործակալության գյուտերի և օգտակար մոդելների բաժնի փորձագետները մասնակցեցին Եվրասիական արտոնագրային գերատեսչության կողմից ազգային գերատեսչությունների մասնագետների համար կազմակերպված «Գյուտերի հայտերի արտոնագրման եվրասիական համակարգը (քիմիայի, բժշկության և կենսատեխնոլոգիայի բնագավառների հայտերի փորձաքննության առանձնահատկությունները)» թեմայով որակավորման բարձրացման դասընթացին:

2019 թվականի նոյեմբերի 5-6-ը Չժուխայ քաղաքում (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) տեղի ունեցավ Մտավոր սեփականության իրազեկվածության վերաբերյալ միջազգային գիտաժողով «Մետաքսի ճանապարհի» երկայնքով տեղակայված երկրների համար, որը կազմակերպել էր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ)

Չինաստանի մտավոր սեփականության ազգային գերատեսչության հետ համատեղ: Միջոցառմանը մասնակցեց գործակալության ներկայացուցիչը:

2019 թվականի նոյեմբերի 12-14-ը Տաշքենդում (Ուզբեկստանի Հանրապետություն) անցկացված «Մտավոր սեփականության ռազմավարություն» խորագրով աշխատաժողովին, որը կազմակերպվել էր Ուզբեկստանի Հանրապետության Մտավոր սեփականության գործակալության և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) հետ համատեղ, մասնակցեց Գործակալության ներկայացուցիչը:

2019 թվականի նոյեմբերի 12-13-ը Երևանում անցկացվեց «Անտիկոնտրաֆակտ 2019» 7-րդ միջազգային համաժողովը: Այն նվիրված էր արդյունաբերական արտադրանքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության խնդիրներին:

2019 թվականի նոյեմբերի 18-ից 19-ը Երևան քաղաքում Գործակալությունը հյուրընկալեց Կորեայի Հանրապետության գյուտերի խթանման ասոցիացիայի ներկայացուցիչներին՝ համատեղ կազմակերպված մտավոր սեփականության ոլորտի կրթական ծրագրերի վերաբերյալ աշխատաժողովին մասնակցելու կապակցությամբ:

Կորեայի Հանրապետության գյուտերի խթանման ասոցիացիայի գործընկերները ներկայացրեցին Կորեայի Հանրապետությունում մտավոր սեփականության բնագավառում մշակված ուսումնական ծրագրերը և դրանց դասավանդումը հանրակրթական դպրոցներում:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան աշխատակիցներ և հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, Կորեայի մտավոր սեփականության գրասենյակի և Կորեայի Հանրապետության գյուտերի խթանման ասոցիացիայի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի

նախարարության մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչներ և այլ հրավիրյալ անձինք:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պետ Երեմ Չախոյանը և Կորեայի Հանրապետության գյուտարարության խթանման ասոցիացիայի նախագահ Ջունհո Կոն ստորագրեցին Փոխըմբռնման հուշագիր՝ մտավոր սեփականության ոլորտում ուսուցման մշակույթը խթանելու և երկու կազմակերպությունների միջև համագործակցությունը խորացնելու նպատակով:

2019 թվականի նոյեմբերի 27-28-ը Աշխաբադում (Թուրքմենստան) անցկացվեց ենթատարածաշրջանային սեմինար «Մտավոր սեփականության ուսուցում» թեմայով: Միջոցառմանը մասնակցելու հրավեր էր ստացել նաև Գործակալությունը:

2019 թվականի նոյեմբերի 27-30-ը Գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի աշխատակիցը մասնակցեց Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Եվրոպայում և Միջին Ասիայում աշխարհագրական նշումների ընդհանուր համակարգի 2-րդ տեխնիկական խորհրդատվությունը» խորագրով միջոցառմանը:

2019 թվականի դեկտեմբերի 9-13-ը Մոսկվայում Եվրասիական արտոնագրային գրասենյակի կոմից կազմակերպված «Հմտությունների թարմացում մինչև MCSA: Windows server 2016» թեմայով վերապատրաստմանը մասնակցեց տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժնի աշխատակիցը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի դեկտեմբերի 11-12-ը Մոսկվա քաղաքում (Ռուսաստանի Դաշնություն) Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի և Եվրասիական արտոնագրային գրասենյակի համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել գործիքակազմի և փորձի փոխանակման տեխնիկական աշխատաժողով, որին մասնակցեցին գործակալության ներկայացուցիչները: